

Ինչ ծնողք որ իրենց տղաքը դեռ հինգ կամ վեց տարեկան եղած չեղած՝ դպրոց կը խաւրեն, իրաւ է որ աս մանր մուկն բաները սորվեցընելէն ազատ կը մնան, ու անոնց վարպետներուն կ'իյնայ գիւրին կերպով սորվեցընելը. բայց իրենք ալ տանը մէջ կրնան նոյն բաներն ընել տալ այսպիսի զուարճալի կերպերով. որպէս զի սորվածնին չմոռնալէն զատ, ան տեսակ անմեղ բաներով անցընեն ատեննին, ու տնեցւոց անհանգստութիւն չտան :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

() ԼԷԼԵՐ ՎՐՈՄՈՒԷԼ :

Ինչ ԳՂԻՈՅ պատմութեան մէջ խիստ անուանի մարդ է () ԼԷԼԵՐ ՎՐՈՄՈՒԷԼ, այնպէս որ բոլոր աշխարհքիս երեւելի մարդկանց ալ մէկը կրնայ սեպուիլ իրեն կարգէ դուրս տաղանդին ու խորամանկ բնաւորութեանը համար : Ծնաւ 1599^{ին}, ու կատաղի բնաւորութիւնը պատկուց 'ի վեր յայտնի բրաւ . այնպիսի սուր երեւակայութիւն մը ունէր որ ամէն ըրածը իբր թէ աստուածային ազգեցութեամբ էր . ասանկով ամէն տեսակ անզգամութեան ձեռք կը զարնէր : Դեռ պատանեկութեան հասակին մէջ իրեն ապագայ վիճակը կը գուշակէր . կը պատմէր թէ երազիս մէջ կնիկ մը երեցաւ ու աւետիս տուաւ ինծի թէ դու բոլոր տէրութեան առջի իշխանաւորը պիտի ըլլաս :

ՎՐԷՄԱՅՐԻՃԻ համալսարանէն ելլելուն պէս՝ քաղաքական կարգերու ետեւէ ըլլալու տեղը, դատարկ ու անպիտան կեանք մը սկսաւ անցընել, որով հօրը թողած չափաւոր ժառանգութիւնն ալ փճացուց :

Կարողոս Ա թագաւորին ատենը

1628^{ին} երրորդ խորհրդարանին անգամ ընտրուեցաւ, և իրեն ճարտասանութիւն խիստ անուանի եղաւ : ՎՐԷՄԱՅՐԻՃԻ աս խորհրդարանն որ վերջուեցաւ, ՎՐՈՄՈՒԷԼ տեսնելով որ բազմալից չյաջողեցաւ, ուզեց ՎՐԷՐԻԿԱ անցնիլ, բայց ճար չեղաւ . վասն զի Կարողոս Ա չէր թողուր որ իր հպատակները ուրիշ տեղ երթան . ուստի ՎՐՈՄՈՒԷԼն ալ Ինչգլիա բռնեց, առանց գիտնալու թէ անիկայ իրեն կենացը դահիճ պիտի ըլլար :

ՎՐԷՄԱՅՐԻՃԻ համալսարանին մէջ երկայն ժողովք մը եղաւ . ետքը () ԼԷԼԵՐ ՎՐՈՄՈՒԷԼ հօն հրամցուեցաւ : Երբոր անիկայ ազտոտ ու պատուաւ հազուստով ատենանը մտաւ, ամէնքը այսպիսի անհոգութեանն ու կոպտութեանը վրայ զարմացած՝ իրեն կը նայէին . իսկ ինքը անհոգ կերպով մը գնաց իրեն համար որոշուած տեղը նստաւ : Կորէն ժողովք մ'ալ եղաւ, ու վճռեցին որ թագաւորին գլուխը կտրեն ու իր յեղէն թագաւորութեան իրաւունքը վերցուի, և ՎՐՈՄՈՒԷԼ Ինչգլիայի, Սկոտիայի, ու Իռլանտայի հասարակապետութեանը խնամակալ անուանեցին : Բայց Կարողոս Ա թագաւորին մահունէն ետեւ, ՎՐՈՄՈՒԷԼ խնամակալութեան պատուովը գոհ չեղաւ, թէպէտ և չյանդգնեցաւ ալ թագաւորի անունը իրեն սեպհականել : Կաւ աս ալ կ'ըսեն թէ երբոր խնամակալ անունը իրեն տուին, ինքը տարակուսելով խորհուրդ հարցուց Սկոտիայ անունով երեւելի խորհրդականին որ յանձն առնու թէ չէ : Ինչիկայ որովհետեւ իրեն հայրենեացը աղէկութիւնը կ'ուզէր, զօրաւոր փաստերով ցըցուց ՎՐՈՄՈՒԷԼԻՆ թէ ամէն բան տակնուվրայ կ'ըլլայ՝ երբ որ հարազատ թագաւորաց կարգը և իրաւունքը փոխուի . խորհուրդ ալ տուաւ իրեն որ Կարողոսին որդին իր հօրը թաղուր դնեն, ինչպէս որ թագաւորական իրաւունքը կը պահանջէր : ՎՐՈՄՈՒԷԼ ամենեւին պատաս-

խան չտուաւ անոր , ու ան օրէն ետեւ ամենեւին սիրոյ նշան մը չցուցուց ան- կողմնասէր և հաւատարիմ խորհրդա- կանին : Եւսպէս ահա դառն կուգայ ճշմարտութիւնը անզգամ ու չարա- միտ մարդուն , թէպէտ և ինքը ետեւէ եղած երևնայ ան ճշմարտութիւնը իմանալու : Բայց Վրոմուէլ ոչ միայն խորհրդարանին միտքը վաստակելովը տիրեց Ենգղիայի , հապա իրեն կող- մը ձգեց նաև շատ մարդիկ որ քաղա- քական պատերազմ բանալու պատ- րաստ ու խիստ յարմար էին :

Վառասուճուներկու տարեկան էր Վրոմուէլ՝ երբոր բոլոր զինուորա- կաններուն գլուխ կեցած՝ այնչափ զօ- րացաւ , որ ամէն ուզածը կ'ընէր և իրեն թրովը զամէնքը կը դողացընէր , ինչուան խորհրդարանին վճիռներուն ալ սկսաւ դէմ դնել ու մերժել : Իրեն դէմ եղած մեծերը հալածեց , ու բո- լոր ճամբաներու գլուխը պահապան զինուորներ դրաւ ու անցուդարձը արգիլեց :


Ինչուան ան ատենը Վրոմուէլ խնամակալի անունով թագաւորեր էր , ու թագաւորի անունը՝ ծիրանին ու գաւազանը միայն կը պակսէր իրեն . ուստի սրտին աս փափաքն ալ կատա- րելու համար , թագաւորական պալա- տը քնաց մտաւ ու թագաւորեց : Եւ կերպով իր փառամով փափաքը կատարելէն ետեւ շատ խելացի գոր- ծողութիւններ ըրաւ . տէրութեան եկամուտները կարգի դրաւ , զինուո- րականաց համար կարգեր կանոններ որոշեց , ամէն կերպով սկսաւ արդա- րութիւն բանեցընել , ու որչափ կա- յելի էր անկողմնասէր ու խելացի մար- դիկ դատաւոր ըրաւ : Եւ զարմանալի յատկութիւնն ալ ունէր որ ամենուն միտքը իրեն կը դարձընէր , ու մէկէ մը չէր վախնար : Եւ աճառականութիւնն ու արուեստները խիստ շատ առաջ տարաւ տէրութեանը մէջ , և ամենէն զարմանալին աս է որ (ինչ- պէս բոլոր պատմիչները միաբան կը հաստատեն) Վրոմուէլ նաև հա-

ւատոյ բաներուն խիստ վրէժխնդիր էր , ու եկեղեցական սկզբանց մէջ մեծ իմաստութեամբ ու զգուշու- թեամբ կը շարժէր , թէպէտ ինքը գրեթէ անկրօն էր : Եւսպէս գիտցաւ թէ ինչ կերպով պէտք էր իր իշխա- նութիւնը ամենուն ահաւոր ընել : Եւսպէս վրայ հոլանտացուց յաղթեց , ու քիչ ժամանակի մէջ Ենգղիան իր առջի բարեկարգութեանը մէջ դրաւ :

Բայց աս կարգէ դուրս մարդը , որ բնութեան ամէն տեսակ ձիրքերովը զարդարուած էր , ու ահագին թա- գաւորութեան մը տիրեց և այնչափ փառք ու պատիւ գտաւ , իրեն կենա- ցը մէջ հանգստութիւն ու երջանկու- թիւն չգտաւ . որով խրատ կ'ըլլայ իր ճամբան բռնող փառասիրաց՝ թէ անիրաւութեան առջի փաստ անիրա-ւին կը դպչի : Եւսպէս թագաւորելէն ետքը անթիւ թշնամիներ ունեցաւ , որ կը ջանային իրեն կեանքը վերցընել : Եւսպէս զրահ կը հագնէր , ու առանց զէնքի ու պահապան զօրքի դուրս չէր ելլէր : Եւսպէս որ բոլոր Եւրոպա կը սասանեցընէր՝ հազիւ իր պալատէն դուրս ելլելու սիրտ կ'ընէր : Եւսպէս սաստիկ ջերմէ բռնուելով , և եր- կայն ատեն տանջուելէն ետքը՝ 1658ին մեռաւ յիսունութին տարեկան :

Իրեն թաղումը շատ փառաւոր հանդիսով ըրին , և ամէն տեսակ թա- գաւորաւայել պատրաստութեամբ . և իրեն մահուանը վրայ Եւրոպայի բոլոր թագաւորազուհիները սուգ մը- տան : Վրոմուէլին թագաւորութիւ- նը թէպէտ շատ չքչեց , բայց իր ա- նունը ամէն ազգաց ծանօթ է՝ մեծա- մեծ գործողութիւններուն համար , ուստի մեր ազգին ալ ծանօթ ըլլալը գէշ չէ :

Եւսպէս ամեն թէ Վրոմուէլ երբոր իմացաւ որ մեռնելու վրայ է , իրեն խիստ հաւատարիմ բարեկամները կանչէր ու յայտներ է իրենց՝ թէ « Եւսպէս հետ հասարակապետու- թիւնն ալ պիտի վերցուի , և մեռնե- լէս ետեւ Եւրոպոս Բ՝ իր հօրը աթոռը



Հոփարդ Վրոմոնէլ :

պիտի ժառանգէ : Պիտեմոր Վարու-
լոսին ցեղը վրէժ առնել պիտի ուզէ
իմ դիակէս . ուստի կ'աղաչեմ ձեզի
որ իմ մահունէս ետեւ իմ մարմինս
անոնց կատաղութենէն ազատէք , :
Ետքը իրեն բնական անվախութեամբ
բը պատմեր է անոնց ինչ ծածուկ
խորհուրդներ որ դեռ ունի եղեր
մտքին մէջ : Պերքսթէտ անունով իշ-
խանաւորը , որ իր խիստ հաւատարիմ
կուսակիցներէն մէկն էր՝ յանձն ա-
ռաւ ամէն խնդիրքը կատարելու :

Թաղման օրը երբոր բոլոր մեծա-
մեծները , առջևէն դատարկ դադաղ
մը , ետեւէն ալ գրեթէ բոլոր Լոն-
տրայի ժողովուրդը , հանդիսով առաջ
կերթային , մէյմըն ալ Լոնտրայէն
կառք մը ելաւ , որուն հետ չորս պա-
հապան կային , ու դէպի դաշտը խո-
տորեցաւ , ուր որ Պերքսթէտին ըն-
կերները կը սպասէին : Ինչ կառքին
մէջն էր Վրոմոնէլին մարմինը :
Պերքսթէտ ու իրեն որդիքը մէկէն

առին կառքէն մեռելը ու դադաղով
հանդերձ իջուցին՝ անոր համար փո-
րուած փոսին մէջ . փոսն ալ ինչուան
բերանը լեցրնէլէն ետեւ՝ աւելցած հո-
ղը ուրիշ տեղ փոխադրեցին , ու հողի
կողտերը այնպէս բնական կերպով
յարմարցուցին որ իրենցմէ զատ ու-
րիշ մարդ չէր կրնար իմանալ թէ հոն
մեռել թաղուած է : Ետ ժամա-
նակ անցնելէն ետքը Վարուլոս Բ հրա-
մայեց որ իր հօրը Վարուլոս Ա^{ին} ոս-
կորները մեծ հանդիսով Լէսթմին-
սթրի եկեղեցին փոխադրեն . միանգա-
մայն Վրոմոնէլէն ալ վրէժ առնելու
համար հրաման տուաւ որ անոր ոս-
կորները գերեզմանէն հանեն ու վան-
դակի մը մէջ դրած՝ դահիճին ձեռքը
տան որ վեր բարձրացնէ : Լոնտոն-
րի եկեղեցւոյն մէջ ամէն տեղ Վարու-
լոս թագաւորին դադաղը փնտռելէն
ետեւ չգտան : Հանդէսին օրը Վրո-
մոնէլին գերեզմանին տեղը գնացին
ու անոր դադաղին մէջը եղած դիակը

հանեցին. մէյմ՝ ալ տեսնեն որ գլուխը մարմինէն բաժնած էր, և միայն պղնձէ թելերով իրարու հետ հաստատուած: Լճէնքը սարսափեցան մնացին. վասն զի մէկէն իմացուեցաւ որ անիկայ Կարոլոս Ան՝ զիական է եղեր՝ որ այնպիսի նախատանայ հասաւ: Լճն ատենի պատմիչները կ'ըսեն թէ Պէրքսթէտ՝ Վրոմուէլին խնդիրքը կատարելու համար՝ ծածուկ կերպով Կարոլոսին մարմինը Վրոմուէլին համար պատրաստած դագաղին մէջ փոխադրեր է. և շատ հաւանական կ'երևնայ:

Վրոմուէլին բնակորութիւնը ասանկ կը ստորագրէ մեծն Պոսիւէ. « Լճը խորախորհուրդայոյժ և նրբա-
 ,, միտ, նենգժոտ կեղծաւոր և քար-
 ,, տար քաղաքագէտ, յամենայն ինչ
 ,, ձեռներէյ և ամենայնի թագու-
 ,, ցիչ, ժիր և անխոնջ յարաժամ՝ ի
 ,, խաղաղութեան և ի պատերազմի.
 ,, և չթողոյր բնաւ ի ձեռս բաղդին
 ,, զոր ինչ միանգամ կարող էր կորզել
 ,, ի նմանէ խորհրդով և կամ կանխա-
 ,, տեսութեամբ. դարձեալ և ար-
 ,, թուն և պատրաստական առ ամե-
 ,, նայն այնչափ՝ զի երբեք ոչ վրիպե-
 ,, ցին ի նմանէ պատեհճն առ ի բաղ-
 ,, դէն ընձեռեալք: Եւ Ուրիշ պատմիչ
 մըն ալ կ'ըսէ թէ Վրոմուէլ իրեն չա-
 փաւորութեամբը, սուտ կրօնասիրու-
 թեամբը, ամէն բանի մէջ արդարու-
 թիւն ցուցնելովը՝ իր ատենի խռ-
 վարարներուն միայն սիրելի եղաւ.
 բայց քիչ ատենէն անոնց ալ ատելի
 ու զգուելի եղաւ ոչ միայն ինքը, այլ
 նաև իր անունը. այնպէս որ իրեն
 թուները հարկ համարեցան Վրո-
 մուէլ անունը ձգել և ուրիշ անուն
 առնել:

Իր որդին Նուբարտ Վրոմուէլ
 (որուն պատկերն է հոս դրածոյս)
 տեղը անցաւ. բայց ոչ հօրը կտրճու-
 թիւնն ունէր և ոչ անոր կեղծաւո-
 րութիւնը. ուստի խորհրդարանը ի-
 րեն 200,000 լիւրէ սթերլին տուաւ ու
 թագաւորական պալատէն դուրս հա-
 նեց. ինքն ալ առանձին տեղ մը քա-

շուած հանգիստ ապրեցաւ, ինչուան
 որ 80 տարեկան մեռաւ 1702ին:

Հ. Տ. Թ.

ՏՆՏԵՍ ԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԳԻԿԱՏՈՍ Եւ ԳԻՏԱՐԱՆԻՆ ՎՐԱՅ ԻԵՂԵՒՈՒՄ:

Աս համառօտ՝ բայց հետաքրքրական ու խեղ-
 ցի հատուածը թարգմանեցինք դաղղիարէն գը-
 րուած տետրակէ մը, որ աս տարի փետրուարին
 տպուած է Աղեքսանդրիա. մէջը երկու յօդուած
 կայ, ու երկրորդին վերնագիրն աս է. Aperçu sur
 le Service quarantenaire de l'Égypte. Առ այժմ
 աս երկրորդ մասը թարգմանելու միտք ունինք:
 Շարա-
 գրողն է մեր ազգէն ՊԱՐՈՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵ-
 ՏԱՆ մեծանուն բժիշկը, որ Եգիպտոսի կուսա-
 կալին ծառայութեանը մէջ շատ երևելի է՝ իր ար-
 հեստին խիստ հմուտ ըլլալովը, ու մեծ պարծանք
 է մեր ազգին: Որոնք որ Պարոն Պետանին հետ
 ճանչնորութիւն կամ թղթակցութիւն ունեցեր են,
 թէ ազգայինք և թէ օտարք, ամէնքն ալ կը վկայեն
 իր ազնիւ սրտին ու ազգասիրութեանը. մենք ալ որ
 իրեն թղթակցութեանն ու բարեկամութեանը պա-
 տիւն ունինք՝ կը յուսանք որ իր ազգասիրական
 ջանքը աւելի հրատարակելու փափաքնիս ալ ուրիշ
 անգամ կատարենք:

ԼԳԻԿՏՈՍԻ մաքրարանը՝ 1831ին
 հաստատուած է. ան միջոցին Լճե-
 սանդրիայի մէջ եղած հիւպատոսները՝
 փոխարքային յորդորանքովը իրենց վճ-
 առին մաքրարանին հօգը. աս հիւպա-
 տոսներն ալ իրենց մէջէն ընտրեցին
 քանի մը հօգի, ու անոնց յանձնեցին.
 1836ին աս ատեանին տեղը անցաւ նո-
 րէն հիւպատոսաց ժողովքը՝. իսկ
 1840ին սկիզբները Լճի շրջանին Լճե-
 անքը՝ իր վրայ առաւ մաքրարանին խը-
 նամբը: Լճի զանազան պաշտօնէից
 ջանքովը՝ Լճի շրջանի լուսաւորեալ ազ-
 գաց մէջ եղած մաքրարաններուն լաւ
 կարգերը Լճիպտոս մտան, խիստ ա-

1 Քարանիւն: Գ. Պ. Quarantaine.

2 Գօնաթղ:

3 Comité Consulaire.

4 Magistrat de Santé.